



Համարը N 32-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2017.07.03/20(589) Հոդ.214
Ընդունող մարմինը Առողջապահության նախարար
Ստորագրող մարմինը Առողջապահության նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 13.07.2017

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 14.06.2017
Ստորագրման ամսաթիվը 14.06.2017
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Գապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ-ՈՒՄ ԴԵՂԵՐԻ, ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ,
 ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՏՇԱԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
 ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
 ՀՀ արդարադատության
 նախարարության կողմից
 26 հունիսի 2017 թ.
 Պետական գրանցման թիվ 10017249

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

14 հունիսի 2017թ.

N 32-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ, ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ, ՀԵՏԱԶՈՏՎՈՂ
 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՏՇԱԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի արտադրությունը իրականացվում է Եվրոպական միության հանձնաժողովի 2003 թվականի հոկտեմբերի 8-ի N 2003/94/EC և 1991 թվականի հունիսի 13-ի N 91/356/EC դիրեկտիվներով հաստատված «Եվրոպական միության պատշաճ արտադրական գործունեության կանոնների» և (կամ) Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդի 2016թ. նոյեմբերի 3-ի N 77 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական միության պատշաճ արտադրական գործունեության կանոնների» համաձայն:

2. Սույն հրամանը ուժի մեջ մտնելու հաջորդ օրը «Եվրոպական միության պատշաճ արտադրական գործունեության կանոնները» և «Եվրասիական տնտեսական միության պատշաճ արտադրական գործունեության կանոնները» տեղադրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (www.moh.am):

Լ. Ալթունյան